

Որոշուած օրին, մեծ ու փոքր՝ այդի դացած կ'ըլլային խաղողը կտրելու համար:

Աղքատներ ու պաշագնի թուրքեր կը վխտային ու դրեթէ կը թալնէին անտէր այգիները:

Անկարելոր նկատուած ցիւցիլները կամ մոռցուած կոյղերը կը մնային անոնց բաժին:

Երկու մասնաւոր կողովներով (հէկ) էշերու վրայ խաղողը կը փոխադրուէր տուն ու կը լեցուէր հնձաններու մէջ:

Հնձանին (Շիրախանէ) կից էր աւելի խորունկ ու ցած ընդունարան մը Լիւցիլը, ուր կը հաւաքուէր ոտքով կոխկոտուած խաղողի հիւթը, քաղցուն:

Այդ օրհնեալ հեղուկով մարդիկ կը պատրաստէին ուտելիք, ըմպելիք ու զանազան բնութեամբ պաշտամունքի ու հեշտանքի նեկտարներ:

ՈՒՌՈՒՊ ԵՓԵԼ

Եռացած ու խտացած խաղողի հիւթն է Ռուպը (Պէքմէզ):

Քամուելէ անմիջապէս վերջ խոշոր ու լայն Լէկէններու մէջ կը լեցնեն շիրան ու կ'եփեն, բերանը բաց: Մէջը կը ձգեն տոպրակով մը ուռալի ճերմակ հող, անուշցնելու համար: Տակը քիչ վառելով կ'եփեն, յաճախակի առնելով երեսի փրփուրը (քէֆ):

Կը խառնեն անընդհատ ու կը պարպեն շիրան դարձեալ բարձրէն իր ամանին մէջ ձեռքի կոքոք քառով, շողիացնելու ու յորդումը արգելելու նպատակով:

Կ'եփեն, մինչեւ որ ճերմակ փրփուրը երեւան դայ ու փորձի համար առնուածին թանձրութիւնը գոհացուցիչ նկատուի: Վերջին պահուն փունջ մը ուհան կը ձգուի մէջը, տան եփուածի դրոշմը դնելով այդ քաղցրահամ անունդին վրայ:

ԹԹՈՒ ՈՒՌՈՒՊ

Նոյն ձեւով եփուած ուռալի մէջ եթէ հող չդրուի, կ'ըլլայ թթուաչ:

Որոշ քանակութեամբ ուռալ մասնաւորապէս թթու կ'եփեն օշարակի ու ամրան տաքերուն գործածութեան համար: